

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՄԵՆՔ*

Քանալի բառեր - ճգնաժամ, համավարակ, գոբալացում, համաշխարհային քաղաքակրթություն, Երկիր դրախտավայր, թուրքական ժանտախտ, Ռուսաստան, Հայաստան, ծուղակ, գաղափարախոսություն, ապագայապաշտական հայացք:

Մուտք

Մեր **նախորդ հրապարակման** մեջ («Թագավարակի գաղտնիքը»¹) ցույց էինք տվել, որ որքան էլ փաստարկված լինեն համավարակի տարածման մեջ մեղավորներ փնտրելու փորձերը, ներկա պայմաններում նման դատողությունները մեզ շեղում են մարդկության առջև ծառայած լրջագույն պրոբլեմից՝ մարդու և բնության հարաբերությունների կարգաբերման խնդրից: Ուստի մերժելով առողջապահական խնդիրների գոբալիստական ու ռեգիոնալիստական մեկնաբանությունները՝ փորձել էինք համավարակի պատճառները սահմանազատել նրա հետևանքների քաղաքականացված գնահատականներից:

Ներկա հրապարակման նպատակն այսօր ողջ Երկիր մոլորակը ցնցող գոբալ ճգնաժամի համակողմանի բացահայտումն է, քանզի մեր կարծիքով՝ Covid-19-ն իրականում ոչ թե այդ ճգնաժամի պատճառն է, այլ հետևանքը: Գոբալ ճգնաժամը շատ ավելի խորն է, ուստի նրա իրական պատճառների ու հնարավոր հետևանքների քննությունը թույլ կտա հայ ընթերցողի մոտ ձևավորել ազգի քաղաքական կամքի ամրապնդման համար խիստ անհրաժեշտ այն **ապագայապաշտական հայացքը**, որից նրան համառորեն զրկում են ներկա քաղաքական դիսկուրսի փաստացի մասնակիցները:

1. Ճգնաժամի անատոմիան

Անցած զարնան ամիսներին, երբ թագավարակը՝ որպես նոր հիվանդություն, սկսեց իր ազդեցությունը տարածել համաշխարհային քաղաքականության ու տնտեսության վրա, Covid-19-ի նեղ մասնագիտական գնահատականները սկսե-

* Հղվածն ընդունվել է տպագրության 20.06.2020:

¹ Տե՛ս <https://www.arfd.am/news/25911/>:

ցին իրենց տեղը գիջել մարդկությանը հայտնի հին հիվանդությունների բացահայտման փորձերին: Քաղաքակրթության ներքին հակասությունները խորացնող թագավարակի համակողմանի քննությունը ցույց տվեց, որ Covid-19-ը պարզապես առկա ճգնաժամի անտեսանելի շերտերը բացող մի սուր նշտար է: Մեր շուրջը ծավալվող բարդ գործընթացների ընկալման համաժամանակյա (սինքրոնիկ) հարթության վրա այդ իրական ճգնաժամը դրսևորվում է **հասարակարգային փակուղու**, իսկ տարածամանակյա (դիաքրոնիկ) հարթության վրա՝ **քաղաքակրթական ճգնաժամի** տեսքով:

Հասարակարգային փակուղին հետարդյունաբերական դարաշրջանի կապիտալիզմի խոր դեպրեսիան է, որն ակնհայտորեն **ճկվել է** վերջին տասնամյակներում կուտակված, իսկ համավարակի պայմաններում՝ կրիտիկականի սահմանագծին հասած տնտեսաքաղաքական խնդիրների բեռի տակ:

Իսկ ահա քաղաքակրթական ճգնաժամն արձանագրում է որպես ուրույն քաղաքակրթություններ կայանալու գերտերությունների փորձերի անհամապատասխանությունը համամոլորակային նոր մարտահրավերներին, ինչը հանգեցնում է ավելի խոշոր ընդհանրությունների՝ գլոբալ ռեգիոնների² ձևավորմանը, այսինքն՝ գլոբալիզացիայի համընդհանրականացմանը:

Համավարակն օրեցօր մեծացնում է անվստահությունը գլոբալացող աշխարհից առանձնացող ոչ մարդակենտրոն համակարգերի հանդեպ, որն իր բարձրակետին է հասնելու հիվանդացության ցուցանիշի նվազումից հետո: Որովհետև, ինչպես ցույց է տալիս ներկա ճգնաժամը, համավարակը մեզ սպասող գլոբալ հեղաբեկումների սոսկ առաջին հանգրվանն է, բայց ոչ բարձրակետը: Ակնհայտ է, որ հաջորդ հանգրվանը լինելու է 1929 թվականի աղետը գերազանցող **Ֆինանսատնտեսական ճգնաժամը**, որին զուգահեռ բռնկվելու են նաև **պատերազմների բոցերը**:

Պատճառն այն է, որ համավարակի առաջին օրերից յուրաքանչյուր երկիր, այդ թվում՝ աշխարհի թիվ մեկ գերտերություն ԱՄՆ-ը, փորձում է համընդհանուր դժբախտությունն օգտագործել «մասնավոր երջանկության» ապահովման համար: Ուստի ժանտախտի օրերին ծավալվող խնջույքում սկսում են առանձնանալ քաղաքական տարբեր ձգտումներ ունեցող պետությունների **երեք** հիմնական խմբեր: Այս եռամակարդակ շերտավորման առաջին սանդղակում մահաբեր բացիլի տարածման մեջ միմյանց մեղադրող անգլոսաքսոնական երկրներն ու Չինաստանն են և դեռ իր ատլանտյան նախապատվությունը պահպանող մայրցամաքային Եվրոպան: Երկրորդ սանդղակում ռեսուրսային տնտեսություններ ունեցող պետություններն են, որոնց բարեկեցությունը կառուցված է էներգակիրների և արդյունաբերական ու գյուղատնտեսական հումքի գրեթե

² Ավելի մանրամասն տե՛ս *Лагутина М. Л.*, Мир регионов в мировой политической системе XXI века. СПб.: Изд-во С.-Петербург. Политех. ун-та, 2016:

անսպառ պաշարների վրա: Իսկ ահա երրորդում հայտնվել են պարզ գործիքներից գործոնի վերածվելու կամ գոնե «գլուխ պահելու» փորձեր անող մեզ նման փոքր երկրները:

Ա. Գլոբալ մակարդակ

Այստեղ քննարկվող առաջնային խնդիրը համաշխարհային տնտեսության նոր բնորդին անցնելու հրամայականն է: Քանի որ ԱՄՆ-ն միայնակ այլևս չի կարող իր ուսերին կրել փողի ու ապրանքների ծավալների անհամապատասխանության և այլ անհամամասնությունների ահռելի բեռը, սեփական արտադրության խթանման ու նոր գործընկերներ³ գտնելու միջոցով մտադիր է այն նետել Չինաստանի ու եվրոպական երկրների ուսերին: Սակայն վերջիններս իրականում համակարգաստեղծ գործառույթներ ստանձնելու հնարավորություն չունեն, ուստի ամբողջ խնդիրն այն է, թե ով ում է «խաբելու» առաջիկա մեկ տարվա ընթացքում:

Պատճառն ակնհայտ է. կապիտալիզմը, ծնելով գլոբալիզացիան, լույս աշխարհ է բերել իր գերեզմանափորին, քանի որ առաջ են եկել գլոբալ անհամամասնություններ արտադրված ապրանքների և դրամական զանգվածի, պարտքերի ու դրանց մարման հնարավորությունների, հումքային ռեսուրսների և առաջին հերթին էներգակիրների առաջարկի ու ռեալ պահանջարկի, դրանց արտադրությունից ստացվող օգուտների ու բնությանը հասցվող վնասների և այլ չափորոշիչների միջև: Եվ քանի որ սրանք ժամանակակից կապիտալիստական հասարակության գոյության անբաժան ուղեկիցներն են, ակնհայտ է դառնում, որ առաջ է գալիս չափից ավելի փքված համաշխարհային տնտեսության **պայթյունի** վտանգը:

Խնդիրն այն է, թե ինչից կսկսվի տնտեսական քառսը՝ էներգակիրների շուկայի՞ց, որն արդեն սառեցված վիճակում է, թե՞ համաշխարհային դրամի, այսինքն՝ դոլարի կտրուկ արժեզրկումից: Երբ էներգակիրների շուկան գրկվել է պատվերների զգալի մասից, իսկ ԱՄՆ **Ֆեդերալ ռեզերվային համակարգը** միացրել է իր «դոլարատայիչը» և ասպարեզ է նետում տրիլիոններով «կանաչ թուղթ», պարզ է, որ արժեզրկվելու են թե՛ մեկը, թե՛ մյուսը, և մնալու է միայն ոսկին: Բայց քանի որ վերջինս նույնպես հիմնականում դոլարով է չափվում, ստացվում է փակ, բայց խիստ պրկված շրջանակ, որի «պայթեցման» եղանակի ընտրությունը կախված է լինելու հրամայաբար իրենց լուծումը պահանջող խնդիրների կարգաբերման գլոբալիստական կամ ռեգիոնալիստական մեթոդաբանության որդեգրումից:

³ Չինաստանի փոխարեն ամերիկյան արտադրանքը «պատճենողների» դերում առայժմ հավանական են համարվում Կանադայի ու Թայվանի թեկնածությունները:

Բ. Ռեգիոնալ մակարդակ

Բայց մինչ այդ համաշխարհային տնտեսության էներգատար ոլորտների կրճատվելու հետևանքով ռեսուրսային տնտեսություններ ունեցող երկրներն արդեն հայտնվել են իրենց ֆինանսական համակարգերի փլուզման վտանգի առջև: Հատկանշական է, որ այսօր նրանց բաժին ընկած «Խեղդվողների փրկությունն իրենց՝ խեղդվողների գործն է» սարկաստիկ կարգախոսն ամենից արդիական է հենց մեր տարածաշրջանում, քանզի նավթի գները գրեթե հավասարվել են սովորական հանքային ջրի գնին, իսկ զբոսաշրջության անկման հետևանքով կտրուկ նվազել են նաև Թուրքիայի ու Վրաստանի եկամուտները: Որպես արդյունք՝ էներգակիրների արտահանման հիման վրա բյուջե կառուցող Ռուսաստանը, Ադրբեջանն ու Ղազախստանը շոկի մեջ են հայտնվել:

Գլոբալացման հետևանքով «սեղմվող» մրցակցային նոր միջավայրում որակը վերջնականապես ու անդառնալիորեն հաղթում է քանակին՝ դրանից բխող բոլոր հետևանքներով հանդերձ: Ուստի դեռևս իր բարձրակետին չհասած համաշխարհային ճգնաժամի առաջին հանգրվանում մեր տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրը սկսել է իր համար հովանավոր փնտրել. Ղազախստանը հասցրել է վազել Չինաստանի գիրկը՝ առաջ բերելով Ռուսաստանի գայրույթը, Թուրքիան շուրջ 10 միլիարդ դոլարի օգնություն է խնդրել Միացյալ Նահանգների կառավարությունից՝ իր լիրայի հետագա անկումը կանխելու համար, Ադրբեջանն արտաքուստ «խելոքացել է», որովհետև «շնչում է» նավթային ֆոնդի գումարներով, որոնք պահվում են արևմտյան բանկերում, Վրաստանը ֆինանսական մեծ ներարկումների շնորհիվ հմտորեն պահպանում է զբոսաշրջության բնագավառի տարածաշրջանային առաջատարի դիրքերը, իսկ Իրանը պարզապես «դիմանում է», որովհետև փակ տնտեսահամակարգ ունի: Մնում է Ռուսաստանը, որը դիմադրում է ոսկու և հազվագյուտ մետաղների ահռելի պաշարների շնորհիվ, ուստի ապագայի առումով դժվարին երկրնտրանքի առջև է՝ կրկին վերակենդանացնել Ֆրիդրիխ Ծմիդտի «Մեծ տարածությունների ավտարկիայի» գաղափարը, թե՛ որդեգրել համակարգային բարեփոխումների ուղին: Արտաքուստ թվում է, թե քանի որ Մոսկվան նավթ ունի, գազ ունի, «օդի ու ապխտած ձուկ» էլ ունի, մնում է Հայաստանի նման մի քանի գաղութ էլ ունենա՝ իր «կայսերական հմայքը» վերականգնելու համար: Բայց ի՞նչ է լինելու հետո, երբ առկա պաշարներն արագորեն հալվում են՝ ստեղծելով ռուբլու մոտալուտ գահավիժման վտանգը: Ուստի երբ ներկա համաշխարհային ճգնաժամի **անատոմիայի** ներկայացումից անցնում ենք նրա **ֆիզիոլոգիայի** քննությանը, ակնհայտ է դառնում, որ այդ ահռելի երկիրը քաղաքակրթական հոգեվարքի մեջ է հայտնվել: Եվ քանի որ նման իրողությունը սերտորեն կապված է ոչ միայն Ռու-

Վե՛ր համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Գրարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

ասատանի, այլև Հայաստանի ապագայի հետ, **համառոտ ակնարկի** միջոցով փորձենք բացահայտել հարցի էությունը:

2. Ճգնաժամի ֆիզիոլոգիան

Եթե համավարակի բռնկմամբ բացահայտված գորբալ ճգնաժամի հասարակարգային դիմերեսին կապիտալիզմի զարգացման որոշակի հանգրվանում առաջ եկած անհամամասնությունների հաղթահարման խնդիրն է, ապա նրա խորքում ուրվագծվում է նման իրողությանը ծնունդ տված **համաշխարհային քաղաքակրթության զարգացման ուղենիշների փոփոխության հրամայականը**: Արդի դրամատիքությանը բնորոշ տնտեսական կամ բնապահպանական խնդիրները միայն իրենց արտաքին տեսքով են կապիտալիստական հասարակության արատներ: Իրականում իրենց ծագումնաբանության առումով դրանք խորապես քաղաքակրթական հիվանդություններ են: Որպեսզի հասկանալի դառնա, թե որտեղից է սկսվել այս ամենը, ստիպված ենք ներկայացնել «**համաշխարհային քաղաքակրթություն**» հասկացության էությունը և բացահայտել նրա հետ մեր ու մեր հարևանների ունեցած կապը:

*Բանն այն է, որ վերջին տարիներին մեր կիսագրագետ քաղաքագիտությունն այնքան է մանրացրել «քաղաքակրթություն» հասկացությունը, որ մեր ընկալումներում ձևախեղվել է նրա համաշխարհային բնույթը: Իրականում համաշխարհային քաղաքակրթության **Մեկ ու թ ու նը** փառաց է բացահայտվել պատմագիտության ու պատմության փիլիսոփայության կողմից: Ի տարբերություն շինական կամ հնդկական մինչև վերջերս ներքին քաղաքակրթությունների, որոնք ստեղծվել են համեմատաբար առանձնացված միջավայրերում որպես նրա «կողային ուղեկիցներ», համաշխարհային քաղաքակրթությունը ձևափոխվել է **հանգրվանայ ի ն սի նթեզի** հետևանքով: Հյուսիսային Միջագետքի հայտնի աղեղից կրա ձեռքբերումների տարածման փուլային գործընթացը ներառել է սկզբում որջ Մերձավոր Արևելքն ու Առաջավոր Ասիան և սպա Եվրոպան ու մնացած մայրցամաքները: Որովհետև ի տարբերություն Հնդկաստանի ու Չինաստանի՝ «Արևմուտքը փոխկապակցված աշխարհ է՝ Բաբելոնից ու Եգիպտոսից մինչև մեր օրերը»⁴ :*

Չկա մարդկային մտքի ու ձեռքի որևէ նշանակալի գյուտ, որը չի հիմնվել փոխառության ու փոխհարստացման վրա՝ գրեթեց սկսած մինչև գերժանանակալից տեխնոլոգիաները: Ուստի Իրանից մինչև Ատլանտյան օվկիանոս ընկած այս համադրական միջավայրում գիտելիքների ու հմտությունների տարածման «նախնական գորբալիզացիան» ծավալվել է Շումերի, Եգիպտոսի, Հայկական լեռնաշխարհի ու շրջակա ցեղերի և անտիկ Հունաստանի միջև: Եվ սպա՝ Ալ. Մակեդոնացու արշավանքի շրջանում, վերադարձել է հետ՝ անցնելով իր հելլենիստական շրջափուլը, իսկ հաջորդ պոստյոր գործել է միջնադարում հելլենիզմի հիմքի վրա ձևափոխված Եվրոպայի ձեռամբ (խաչակրաց արշավանքներ): Հաջորդը՝ Նոր ժամանակներում

⁴ Ясперс К., Смысл и назначение истории: Пер. с нем. - М.: Политиздат, 1991, с. 94.

էր (Ամերիկայի հայտնաբերմանը), իսկ Նորագույն ժամանակներում ամերիկանացուսն տես-
քով տեղի ունեցած նրա «հետդարձը» հասել է մինչև մեր օրերը:

Այս հետ ու առաջ շարժումների միջոցով անընդհատ հարստացող համաշխարհային քա-
ղաքակրթությունն իր ներսում ի սկզբանե ունեցել է սեփական արժեքային ուղենիշներն ու
դրանց բևեռները, որոնք հիմնվել են նյութականի ու հոգևորի համադրության սկզբունքների
վրա, իր «առևտրականներն» ու «հերոսները»: Քրիստոնեության և սպա իսլամի առաջ բե-
րած հեղափոխությունները գաղափարական հզոր լիցքեր են հատրդել կյանքի խնաստի այս
նախնական ընկալմանը բնորոշ ներքին հավասարակշռություններին: Թեև բուն խնդիրը եղել
է նյութականի ու հոգևորի ներդաշնակության սպահովման առաջադրանքը, բայց Նոր ժամա-
նակներում գարգացման հրամայականը հանգեցրել է առաջինի գերակայության հաստատում-
նը՝ Մեծ Բրիտանիայում հրեական թթիվորից «հունցված» անգլոսաքրոնական ավանդույթի
միջոցով: Նրա հզորության հիմքը կազմող **կապիտալ իզմի ոգին** արմատապես փո-
խել է նախնական հարաբերակցությունը հոգուտ նյութական աշխարհի: Իսկ Ամերիկայի վե-
րելքի հետևանքով մարդկությունն է՛լ ավելի է կտրվել կյանքի խնաստի նախնական ընկալու-
մից՝ առաջ բերելով այն ահռելի անհամասնակցությունները, որոնց կուտակումը սպառնալիք է
ստեղծում նրա համար: Արտաքուստ դրանք բաժանվում են մի քանի խոշոր խմբերի՝ Ֆինան-
սատնտեսական, բնապահպանական, ժողովրդագրական և այլն, բայց բոլորն էլ ձևավորվել
են քաղաքակրթական խոր հակասությունների հիմքի վրա: Այսինքն՝ մարդը վերածվել է
հարստության աննպատակ կուտակման միջոցով իր նմաններին ու բնությունը ոչնչացնող մե-
քենայի, ուստիև ինչ-որ մի պահի սկսել է սպառնալ նաև իր սեփական գոյությանը: Նման
սպառնալիքների անկառավարելիության մեծացումը վաղ թե ուշ պետք է ծնունդ տար **գլո-
բալ հեղափոխու թյան** գաղափարին, ինչը հնարավոր է իրականացնել միայն մի նոր
շրջադարձով՝ դեպի հետ, դեպի մարդկության բնօրրան, դեպի **Երկիր դրափառակայ ր**⁵:

Ճգնաժամի ֆիզիոլոգիայի այս համբերատար ներկայացումից դժվար չէ եզ-
րակացնել, որ ներկա գլոբալ ցնցաբուժությունը, վերածվելով գլոբալ հեղափո-
խության, հանգեցնելու է հոգևորի ու մարդկայինի փնտրտուքին, ինչը համավա-
րակից առաջ էլ ակնառու էր դարձել: Վերջին տարիներին մարդկությունը բնագ-
դաբար սկսել էր վերականգնել իր հետաքրքրությունը Եվրասիայի սակրալ գոտի-
ների և առաջին հերթին Մերձավոր-Միջին Արևելքի, այդ թվում՝ նաև Հայաստանի
հանդեպ: Դրանք այն գոտիներն են, որտեղ ծնունդ է առել համաշխարհային քա-
ղաքակրթությունը, և ձևավորվել են համաշխարհային կրոնները: Եվ այս առումով
սկսվել էր անգամ ողջ քրիստոնյա աշխարհի քաղաքակրթական ձգտումների հա-
մադրության գործընթացը դեռևս հանրային ընկալումների տիրույթում:

3. Երկիր դրափառակայրն ու թուրքական ժանտախտը

Համավարակի արագ տարածումը որոշակի ճշգրտումներ է մտցնում հա-
մաշխարհային քաղաքակրթությանը բնորոշ **հետ ու առաջ** շարժումների ներկա
հանգրվանում: Հայտնվելով ծանր վիճակում՝ ռեսուրսային տնտեսություններ ու-

⁵ **Երկիր դրափառակայր** համադրույթի նախնական ուրվագծերը տես **Խուրիյան Գ.**, Ազգային և ազգային-
պետական գաղափարախոսություն, Եր., «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2003, էջ 75-78:

նեցող երկրները սկսում են դատել «Խտեղովողների փրկությունն իրենց՝ խտեղ-վողների գործն է» կարգախոսի միջոցով: Ուստի համաշխարհային ճգնաժամի հաղթահարման քաղաքակրթական նոր բանաձևի փնտրտուքը բախվում է ժա-մանակին Միջին ու Առաջավոր Ասիայի քաղաքակրթություններն ավերակների վերածած օտարամուտ թուրքական գործոնի հակազդեցությանը: Թուրքական գործոնը **հակաքաղաքակրթական** բնույթ ունի, որովհետև ձևավորվել է այլոց տարածքներում քոչվորականի անասնահոտերն արածացնելու և ապա նրանց ավելի բարձր մշակույթները յուրացնելու միջոցով: Այդ պատճառով համաշխար-հային պատմության մեջ արձանագրված քաղաքակրթությունների անկումներն ու տրոհումները, դրանց ուղեկցած ճգնաժամերն ու համաճարակները և այլ դժբախտություններ, թուրք ցեղի հաջողության վճռական պայմանն են եղել: Այսպես՝ ժանտախտը պարզունակ կենսաբանական գենքի վերածելու առաջին փորձերը ձեռնարկել են միջնադարում Չինաստանի ամրոցները պաշարած թուրքական քոչվոր ցեղերը: Այդ նպատակով նրանք կիրառել են կատապուլտ-ների միջոցով ժանտախտով հիվանդացած կենդանիներին պաշարված ամրոց-ներից ներս նետելու հնարքը: 14-րդ դարում Ոսկե Հորդայում իշխանությունը զավթած թուրքական խաներն են դարձել միջնադարյան Եվրոպային իր բնակ-չության գրեթե կեսից զրկած ժանտախտի՝ «**սև մահի**» տարածողները: Մասնավորապես Չանիբեկ խանի կողմից ջենովական գաղութ Կաֆայի 1346 թ. պաշարման ժամանակ հիվանդների դիակներն ամրոցից ներս նետելու հետևանքով ջենովացիներին անցած այդ հիվանդությունից 1346-1353 թթ. զոհ-վեց Եվրոպա մայրցամաքի բնակչության գրեթե կեսը: Իսկ ԽՍՀՄ գոյության տարիներին ժանտախտով վարակված կենդանիներին Արաքս գետը նետելու մի-ջոցով այդ հիվանդությունը Խորհրդային Հայաստանում տարածելու բազմաթիվ փորձերը Թուրքիայի թշնամական գործելակերպի անբաժան մասն էին դարձել:

Անշուշտ, «Ժանտախտն ու թուրքերը» թեման առանձին հետազոտության նյութ է, բայց այն իրողությունը, որ Covid-19-ի առաջ բերած առաջին ցնցումից ուշքի եկած Թուրքիան սկսել է արագ նախապատրաստվել համավարակի տա-րածման պատճառով իր հարևաններին բաժին ընկած դժբախտությունն օգտա-գործելուն, արդեն անվիճելի փաստ է: Ո՞րն է նման շտապողականության պատ-ճառը: Թուրքերը լավ են հասկանում, որ երբ սեփական հիմքին վերադառնալու իրենց մեկդարյա փորձը՝ պանթուրքիզմը, բախվել է Միջին Ասիան և Ղա-զախստանն արագորեն կլանող Չինաստանի առաջխաղացման փաստին, չա-փից ավելի նյութականացած արևմտյան, բայց իրականում համաշխարհային քաղաքակրթությունն էլ իր հոգևոր նախահիմքին՝ Երկիր դրախտավայրին վե-րադառնալու ցանկություն է դրսևորում: Ուստի իրենք աստիճանաբար դուրս են մղվելու նաև ներկայումս զբաղեցված տարածքներից՝ քաղաքակրթության բնօրրանից՝ ներքնապես տրոհվելով մի քանի ենթահիմքությունների: Հիսուսի ա-

շակերտների անցած վայրերում հանգստյան գոտիներ կառուցելու և շահույթ ստանալու նրանց փորձերը երկար չեն տևելու, իսկ սահա Կ. Պոլսի կամ Դիարբեքի զավթված քրիստոնեական տաճարներին կցված միևարելթները չեն թաքցնելու դրանց իրական ծագումը: Ուստի քանի դեռ գյոբբալ ճգնաժամը չի հասել իր բարձրակետին՝ Թուրքիան դաշնակիցներ է փնտրում իր բախտակից ռեգիոնալիստական ուժերի շրջանում՝ Մերձավոր-Միջին Արևելքի վերաբաժանումն արագացնելու, այսինքն՝ մի **նոր Լոզան** նախապատրաստելու համար:

Նման արագացումների հեռանկարից մեր ունեցած մտավախությունը հիմնվում է հետևյալ տրամաբանության վրա.

ա) ներկա համաշխարհային ճգնաժամի հիմքում գյոբբալ ուժերի արժեքային կողմնորոշումների պայքարն է քաղաքակրթության զարգացման անհամամասնությունների հաղթահարման ու ներդաշնակ մարդկության ձևավորման համար,

բ) այդ խնդրի լուծման համար չափից ավելի ռացիոնալացած մարդկային քաղաքակրթությունը իր բնօրրան՝ Երկիր դրախտավայր վերադարձի ակնհայտ միտումներ է դրսևորում,

գ) վերջինիս աշխարհագրական սահմանները համապատասխանում են քաղաքակրթության հիմնաքարը դարձած՝ Առաջավոր Ասիայի ու նրան հարակից երկրների սահմաններին, որոնք Արևելյան Միջերկրածովքից ձգվում են մինչև Սև ու Կասպից ծովերի ափերը:

Այս հաստատումների լույսի ներքո ամենևին էլ պատահական չէ, որ վերջին շրջանում Թուրքիայի ձեռնարկած հետևողական քայլերի արդյունքում մեր ընդարձակ տարածաշրջանում բորբոքվելու միտումներ են դրսևորում հետևյալ հսկամարտությունները.

- թուրք-սիրիական՝ «սամանյան ժառանգության» ու մանավանդ նրա Հալեպ կենտրոնի վերագրավման տեսլականով,

- թուրք-քրդական՝ Թուրքիայում, Իրաքում և Սիրիայում քրդերի ինքնորոշման փորձերի ճնշման տեսքով,

- թուրք-հունական՝ Արևելյան Միջերկրածովքում և Հունաստանի ու Կիպրոսի ափամերձ գոտիներում առկա վեճերի պատճառով,

- թուրք-հայկական՝ ինչպես գյոբբալ քաղաքականության օրակարգում հաստատված Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի, այնպես էլ երկկողմ ու Ադրբեջանով միջնորդավորված դիմակայությունների տեսքով,

- անգամ տասնամյակներ շարունակ միապուց հետո դանդաղորեն մարող իսլայելա-արաբական հսկամարտության կրակն այսօր իր պաղեստինյան ու լիբանանյան մրցադաշտերում բորբոքվում է հենց Թուրքիայի կողմից,

- և վերջապես՝ այդ ամենի սեղմված ու քաղաքակրթական հավասարակշռության կերպարանք ձեռք բերած Երուսաղեմի սրբավայրերի ներքին համամասնությունները նույնպես ցնցվում են Թուրքիայի կողմից:

Ստացվում է, որ համաշխարհային քաղաքակրթության բնօրրանն ու համաշխարհային ճգնաժամի հաղթահարման քաղաքակրթական նոր բանաձևի համար անհրաժեշտ Երկիր դրախտավայրը, որն իր պատմությամբ, մշակույթով ու կենցաղավարությամբ պետք է դառնա ներդաշնակության ձգտող ողջ մարդկության արժեքային բնորդը, համաշխարհային կրոնների և բնության ու մարդու հաշտեցման ժամադրավայրը, հայտնվել է այդ քաղաքակրթության թշնամի Թուրքիայի կողմից արագորեն կլանվելու սպառնալիքի առջև: Եվ համավարակն արդեն օգտագործվում է Թուրքիայի կողմից առանձին ժողովուրդների, մասնավորապես Հյուսիսային Իրաքի եզդիների համար անտանելի պայմաններ ստեղծելու նպատակով, ճիշտ այնպես, ինչպես Հայոց ցեղասպանությունից հետո՝ վերապրած հայերի հանդեպ:

Չմոռանանք, որ *Առաջին աշխարհամարտի ավարտին՝ 1918 թ. ամռանն ու աշնանը, Թուրքիան, հենվելով 1918 թ հունիսի 4-ի Բաթումի պայմանագրի վրա, օկուպացրել էր Արարատյան դաշտավայրի բերքատու շրջանները՝ 1918-1919 թթ. ձմռանը սովի ու ժանտախտի ճիղաններում մահվան դատապարտելով նորանկախ Հայաստանի բնակչությանը: Էջմիածնի ու Երևանի մատույցներում հայտնված թուրքական զորքերը կանխատեսված ձևով թույլ չէին տալիս, որ հայ գյուղացիները տեղ կանգնեն Բզդիթի, Մարդարասպատի ու Դախլուի դաշտերում փչացող բերքին՝ մերժելով անգամ իրենց դաշնակից Գերմանիայի բազմաթիվ պահանջները: Ուստի 1918-1919 թթ. ձմռան սովից ու բժախոր տիֆից **180 000 հայ երի** մահը «Ցեղասպանության կանխարգելման ու դրա համար պատժի մասին» 1948 թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածի գ կետով սահմանված «որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը»⁶ մինչ օրս չպատժված հանցագործության վկայությունն է:*

Համավարակի շրջանում ակտիվացած Թուրքիայի նոր նկրտումները ժամանակավոր հակասություն են ստեղծում գորբալ և տարածաշրջանային գործընթացների ուղղվածության ու նպատակների միջև, որովհետև առաջիկա մեկ տարվա ընթացքում, երբ մարդկությունը հիմնականում զբաղվելու է առողջապահական խնդիրներով, Թուրքիան փորձելու է նորանոր պատառիկներ պոկել իր հարևաններից: Ավելին՝ նրա ագրեսիվությունն էլ ավելի է մեծանալու Ռուսաստանում ստեղծված բարդ կացության և Հայաստանի ու Ադրբեջանի միջև առկա խնդիրների պատճառով:

4. Ռուսաստանի քաղաքակրթական երկունքը

Երբ մարդկության դժբախտություններից պարբերաբար երջանկացած քաղաքակրթության թշնամի թուրքը սպասում է իր այս կամ այն հարևանի թուլանալու պահին՝ նրա հետ հաշվեհարդար տեսնելու համար, մենք կրկին արձա-

⁶ http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf (մուտք 20.06.2020).

նագրում ենք այն իրողությունը, որ ինչպես **1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջման** նախօրեին, այնպես էլ այսօր մեր հյուսիսային դաշնակիցը բարդ վիճակում է հայտնվել:

Թեև իր հումքային պաշարներով Ռուսաստանն աշխարհի ամենահարուստ երկիրն է, բայց խորհրդային ամբողջատիրության չհաղթահարված բեռը նրան հասցրել է քաղաքակրթական հոգեվարքի: Մինչդեռ համավարակով պայմանավորված հազարավոր մահերի առաջն առնելու փոխարեն այդ երկրի ղեկավարությունը զբաղված է շքեթներ կազմակերպելու և անտանելի դրությունը կոծկելու գործով: Ավելին՝ հասկանալով, թե ինչ կարևոր դեր է վերապահված անկախ Հայաստանին համավարակով սկիզբ առնող գրքավ ցնցաբուժության հաջորդ հանգրվաններում, Մոսկվայում ամեն ինչ անում են մեզ նորից **ամբողջովին տիրելու** և օգտագործելու նպատակով: Որովհետև Արևմուտքը չի ընդունում Երկրորդ աշխարհամարտում հաղթանակի հիմքի վրա երկխոսելու պուտինյան համառ առաջարկները: Համաշխարհային քաղաքականության առանցքային միտումը վերադարձն է **Առաջին աշխարհամարտի** արդյունքներին, երբ բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավարությունը, փրկելով ցեղասպան Թուրքիային, հանցանք կատարեց հայ ժողովրդի ու պատերազմում զոհված հազարավոր ռուս զինվորների հանդեպ: Ուստի ռուս-թուրքական համագործակցության արյունոտ պատմությունը փակ պահելու համար պետք է փակել Հայաստանի բերանը: Ու քանի որ 2018 թ. Հայաստանի «բերանը բացվել է», այն կրկին փակելու համար ներկայումս Մոսկվայում առկա **վարչակարգին** 2008 թ. իշխանության բերվածի և 2009 թ. հայ-թուրքական արձանագրությունները ստորագրածի նման մեկն է հարկավոր:

Հակաարևմտյան մտասևեռումով կուրացած Ռուսաստանի ղեկավարության նման էգոիստական ձգտումները ամենևին էլ չեն նույնանում Ռուսաստան պետության ու ռուս ազգի քաղաքական նպատակների հետ: Ի վերջո իր պատմությամբ, մշակույթով ու կենցաղավարությամբ ներդաշնակության ձգտող մերձավոր միջինարևելյան Երկիր դրախտավայրում «երկու Բյուզանդիա» չի լինելու: Իսկ Վ. Պուտին-Ռ. Էրդողան «ախպերության» կողմից պարբերաբար ստեղծվող ռուս-թուրքական հակամարտությունը աշխարհաքաղաքական կոլիզիա է, որը խաղաղ լուծում չունի: Միրիայում լինի դա, թե Լիբիայում կամ մեկ այլ վայրում, մի օր այն պայթելու է: Բայց ինդրի հայանպաստ լուծումը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ ռուս ժողովուրդն իր մեջ ուժ կգտնի՝ վերադառնալու համաշխարհային քաղաքակրթության գիրկը, որից նա հեռացել է 1917 թ. իր **բունտի** հետևանքով: Միայն այդ համատեքստում կվերականգնվի դեռևս թրքամետ բոլշևիզմի մնացուկներից չազատագրված **իրական Ռուսաստանը**, քանզի երբ ԱՄՆ-ի պետքարտուղարն անգամ պահանջում է Թուրքիայից Սուրբ Սոֆիայի տաճարը չվերածել մզկիթի, իսկ Ռուսաստանի նախագահի մամլո խոսնակը Ռ. Էրդողանի նման մտադրությունը համարում է Թուրքիայի ներքին գործը, սալա մոսկովյան

Վեն համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Գարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

ներկա վարչակարգը դադարում է Ռուսաստանյան կայսրության իրավահաջորդը լինելուց: Սա ռուսական ազգայնականության «Խաչը՝ Սուրբ Մոֆիայի վրա» գաղափարից, այսինքն՝ Ռուսաստանի քաղաքակրթական առաքելությունից հրաժարվելու փորձ է, ինչը էժան չի նստելու մոսկովյան վարչակարգին:

Ուստի երբ Ռուսաստանի ներսում կրկին հասունանում են քաղաքական լուրջ ցնցումները, մենք պետք է պատրաստ լինենք իր հարյուրամյակը բոլորած պատմության կրկնությանը: Ընդ որում, խոսքը ոչ թե տարիների, այլ ամիսների մասին է, որովհետև արդեն առաջիկա աշնանը Ռուսաստանը կարող է կանգնել իր ֆինանսական համակարգի փլուզման առջև, քանզի էներգակիրների գնանկման պայմաններում նրա վերնախավը գրկվել է համակարգային կոռուպցիայի հիմնական ռեսուրսից: Բայց համավարակը հստակ է դարձնում նաև այն իրողությունը, որ Ռուսաստանի վերադարձը քրիստոնյա մեծ ազգերի գիրկը տեղի է ունենալու առանց արյունալի քաղաքացիական պատերազմի:

Մեր խնդիրը Ռուսաստանում անխուսափելի դարձող քաղաքական փոփոխությունների նախնական հանգրվանում Հայաստանի համար միանգամայն հնարավոր՝ անվտանգային մարտահրավերների հաշվառումն է: Դրանցից մեկը մեր հարյուր հազարավոր ռուսաստանաբնակ հայրենակիցների հայրենիք վերադառնալու ձգտման առարկայացումն է, որի ականատեսն ենք մենք այսօր: Ուստի հայտնվելով արտաքին լրջագույն սպառնալիքների առջև, մենք պետք է **այլ ակնոցներով** նայենք մեր երկրում ու նրա շուրջը ծավալվող իրադարձություններին:

5. Հայաստանը կորոնավիրուսային ծուղակում

Երկու տարի է անցել Հայաստանում տեղի ունեցած հեղափոխական ցնցումներից, բայց մեր երկիրը շարունակում է սկյուռիկի նման պտտվել պերմանենտ ցնցաբուժության կարուսելի մեջ, որի վերջն այդպես էլ չի երևում:

Երբ փորձում ենք իմաստ փնտրել Հայաստանում պարբերաբար բռնկվող խիստ բուռն, բայց անպտուղ դիսկուրսների մեջ, անմիջապես արձանագրում ենք դրանց դրական բովանդակության բացակայության փաստը: Նախքան վերջին համավարակը ծավալվող բանավեճերի տրամաբանությունը, իր առանձին բացառություններով հանդերձ, **ընդհանուր առմամբ** գտնվում էր «քոռի ու քաչալի» մասին հայկական ժողովրդական առածի շրջագծում, երբ կույրը մեղադրում է ճաղատին «քաչալ» լինելու մեջ, իսկ ճաղատն էլ հիշեցնում է կույրի «քոռ» լինելու փաստը: Քանզի միմյանց հավասարապես «օտարերկրյա 5-րդ շաբապուն» լինելու մեջ մեղադրող **հիմնական կողմերի** ողջ տրամաբանությունը հանգում էր նախկինների հանցավորության ու ներկաների սպաշնորհության՝ առանց այդ էլ անվիճելի փաստերի «քոռ ու քաչալային» քննարկմանը, ինչի պատճառով իրական հարցերը մնում էին անպատասխան:

Այս փակուղային երկրնտրանքի առկայության պայմաններում սկիզբ առած համավարակը բացահայտեց նաև այն իրողությունը, որ մեր «հասարակություն» կոչված մտավորականությունը հավասարապես և՛ «քոռ» է, և՛ «քաչապ», որովհետև մարտի կեսերից ակնհայտ դարձած մահացու սպառնալիքի պայմաններում նրա մտածող մասը կարող էր փրկել ստեղծված կացությունը, բայց չչարժվեց իր տեղից՝ հույսը դնելով իշխանության վրա: Մինչդեռ համավարակի տարածման պայմաններում ակնհայտ դարձավ, որ գործող իշխանությունը պարզապես **չի ճանաչում** սեփական ժողովրդին, ուստի նրան անընդհատ «սեր» խոստովանելով՝ փորձում է խնդրել ու համոզել, որպեսզի պահպանվեն տարրական սանիտարահիգիենիկ նորմերը:

Եվ շուտով պարզվեց դառը ճշմարտությունը՝ մեր ժողովրդի ճնշող մեծամասնությունը, մանավանդ նրա երևանյան հատվածը, վերջին իշխանավորության հետևանքով իրականում ոչ թե ազատություն է ձեռք բերել, այլ ամենաթողության իրավունք: Նրա համար **Նիկոլը** պարզապես այն «ինդուլգենցիան» է, որի օգնությամբ միջին վիճակագրական «երևանցին» ազատվել է պետությունից: Որովհետև **Նիկոլի** միջոցով փրկվելով հազար ու մի հանցանքներ կատարած, սակայն պետական իշխանության ուղղահայացը միշտ ամուր պահած «**դարաբաղցիներից**», միջին վիճակագրական «երևանցին» հասել է իր երազանքին՝ հանրային շահի վրա «թքած ունենալու» իրավունքին: Դա է պատճառը, որ երբ բանից անտեղյակ պոպուլիստների իշխանությունը անցած ամիսներին միլիարդավոր դրամներ բաժանեց Հայաստանի կարիքավոր խավերին, ահագնացող համաճարակի պայմաններում սկիզբ առան երևանյան թաղային խուժանի գռեհիկ խրախճանքները, որոնք ուղղակի խորտակեցին Covid-19-ի դեմ պայքարի բոլոր ջանքերը:

Այս ամենը ցույց է տալիս, որ 2018 թ. գարնանը տեղի ունեցած «հեղափոխությունը» Երևանում հաստատված եռանդուն ու կարգապահ, ուստիև ավելի հաջողակ «դարաբաղցիների» հանդեպ տասնամյակներ շարունակ մայրաքաղաքի բնակչության մի սովոր հատվածի մոտ ձևավորված **անլիարժեքության բարդույթի** պոռթկումն էր, որն օգտագործվեց երիտասարդության մի շերտի ու որոշակի արտաքին ուժերի կողմից: Ուստի որքան էլ այդ երիտասարդությունն իր առաջնորդի գլխավորությամբ ահա արդեն 4 ամիս «սեր է խոստովանում» թաղային խուժանին ու կարգի է հրավիրում նրան, վերջինս շարունակում է Նիկոլի կենացներով ու փոխադարձ «**պաշ-պոռոշտիներով**» ուղեկցվող քեֆերը: Որպես արդյունք՝ հետեղեռնյան հավաքատեղի հանդիսացող երևանյան «թաղային հասարակության» խորքային հիվանդություններին անտեղյակ պոպուլիստական իշխանությունն ընկել է իր իսկ փորած փոսի մեջ, քանզի Երևանից տարածված համավարակը հասել է գրեթե բոլոր մարզեր:

Այս իրավիճակում սկսել է աշխուժանալ նաև քաղաքական ընդդիմությունը, որն իրավացիորեն մեղադրում է իշխանությանը իրավիճակին չտիրապետելու մեջ: Սակայն այդ աշխուժացումը հանգեցնում է նրան, որ առաջին իսկ հանպատրաստից ցույցերի ու Ազգային ժողովի նիստերի հետևանքով վարակվում է նաև պատգամավորների ու քաղաքական գործիչների մի մասը: Եվ ակնհայտ է դառնում, որ իր սիրելի «**Ժող. ջանին**» կարգի հրավիրելու փոխարեն փողոցներում դիմակներ բաժանող իշխանությունը ու համավարակի մասին կեղծ լուրեր տարածող ընդդիմության մի հատվածը որևէ կապ չունեն այն իրական խնդիրների հետ, որոնք այսօր ծառացել են Հայաստանի առջև:

2018 թ. գարնանը տեղի ունեցած քաղաքական ցնցումներից հետո Հայաստանի քաղաքական դաշտը ազգային քաղաքականության սահմանափակ սուբյեկտից աստիճանաբար վերածվել է այլոց քաղաքականության գրեթե ամբողջական օբյեկտի, որը ներքուստ բզկտվում է օտարամուտ տարրերի անհաշտ դիմակայությունից: Նման պայմաններում միանգամայն բնական է, որ հայ մարդկանց կյանքեր խլող համավարակը նույնպես վերածվում է ներքաղաքական պայքարի գործիքի: Որպես արդյունք՝ նախկին կառավարող համակարգի որոշ մնացուկներ բանից անտեղյակ մարդկանց շրջանում զգուշորեն տարածում են Covid-19-ի «կեղծիք» լինելու վարկածը՝ նրանց դատապարտելով ստույգ մահվան: Իսկ ահա իշխանությունն էլ համավարակի «երկրաչափական պրոգրեսիան» դիտարկում է որպես իր ձախողումների համար պատասխան տալու պահը երկարաձգելու հնարավորություն: Հավասարապես արտաքին ազդակներով սնվող այս անհատների և ուժերի ներհայաստանյան դիմակայության պայմաններում մեր երկիրը ռեկորդներ է գրանցում համավարակի տարածման ասպարեզում, որովհետև հայ մարդկանց կյանքն ու առողջությունը **հայանուն օտարներին** բոլորովին էլ չեն հետաքրքրում:

Համավարակի պատճառով համաշխարհային ճգնաժամի ալիքների վրա հայտնված հայ ժողովուրդն այսօր փաստացի անտերության է մատնվել: **Այս ամենն ազգային ուժերի քայքայման, պառակտման ու փոշիացման այն հետևողական քաղաքականության արդյունքն է, որն իրականացրել են Հայաստանի նախորդ բոլոր իշխանությունները:** Ազգայինը պահպանողականի վերածելու, իսկ համամարդկային արժեքները «ձեռքից տալու» հետևանքով Հայաստանի քաղաքական դաշտի **հայկական սեգմենտի** թուլացումը հասել է այն վտանգավոր սահմանագծին, երբ «**մենք**»-ի, մեր ինքնության արդիական ընկալումը մեջտեղից վերացել է: Ուստի որքան շատ ենք խոսում ազգայինից, այնքան մեր ձայնն ավելի թույլ է լսվում: Այդ պատճառով իրական ազգային ուժերի ու գործիչների համախմբման սուր պահանջը մեզանում հրամայական անհրաժեշտություն է դարձել:

6. Ռազմավարական կատեգորիաներով մտածելու ժամանակը

Համավարակային ընթացիկ իրավիճակն ի վերջո հանգեցնելու է նրան, որ հազարավոր գոհերի գնով տարրական ճշմարտություններ ըմբռնած «**ժողջանական**» իշխանությունը կամ հեռանալու է ասպարեզից, կամ էլ դառնալու է ավելի բռնապետական, քան իր բոլոր նախորդները: Բայց քանի որ մեզանում առկա է արտաքին ուժերի ներքաղաքական կերպավորումների «փոխատեղության» վտանգը, իրավիճակի հետագա սրումը որևէ ռազմավարական հեռանկար չի խոստանում մեր երկրին: **Փակուղին երկկողմանի** է, քանի որ վատ մղձավանջում միայն կարելի է պատկերացնել այն «հայտնի ուժերի» վերադարձը, որոնք այսօր տանուկ են տալիս անգամ իրենց բնօրրան Ռուսաստանում: Մյուս կողմից ավելի քան սկսնհայտ է, որ պոպուլիստական ժողովրդավարությունը երկար կյանք չի ունենալու համաշխարհային ճգնաժամի մեջ հայտնված Հայաստանում: Ուստի ներկա հանգրվանում պետք է մտածել արտաքին թելադրանքների չեզոքացման ներքաղաքական մեխանիզմների հետագա ամրապնդման մասին: Այդ մեխանիզմները հաջողությամբ գործեցին Ղարաբաղի հարցով Ռուսաստանի ճնշումները չեզոքացնելու համար, ուստի առաջիկայում նույն գործառույթը կարող են իրականացնել նաև հակառակ բևեռից ձեռնարկվող «կարգավորման փորձերի» հանդեպ, որոնք կրկին սկսել են շոշափել հայթուրքական փակ սահմանը բացելու հեռանկարները:

Խնդիրը մոտ ապագայում մեզ սպասվող փորձություններին նախապատրաստվելն է: Որովհետև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին դիմակայելու կամ պատերազմների ալիքները վանելու բարդ առաջադրանքներն ու Հայաստանի ներկա քաղաքական ընտրախաղի հնարավորություններն ուղղակի **անհամատեղելի են**: Համաշխարհային ճգնաժամի բարձրակետին դիմակայելու գործին նախապատրաստվելու համար մեզ նոր ընտրախաղ ու նաև նոր գաղափարախոսություն է հարկավոր, ուստի պետք է մտածել ժամանակը ռացիոնալ օգտագործելու մասին: Եկել է հեռուն նայելու և ռազմավարական կատեգորիաներով մտածելու պահը, որովհետև այսօր հրապարակում առկա ընտրախաղերն ի վիճակի չեն բարձրացնել առաջիկայում մեր երկրի առջև դրվելիք «ժանրաձողերը»: Իսկ նրանց որակապես նոր մակարդակ ունեցող փոխադրվողներ փնտրելուց առաջ **նախ՝ հարկավոր է տալ ներկա ճգնաժամի հստակ գնահատականը և ապա մշակել գալիք մարտահրավերներին համապատասխանող գաղափարախոսություն**: Քանզի Covid-19-ը, բացելով գլոբալ ճգնաժամի իրական դեմքը, լուսարձակել է նաև նրա յուրաքանչյուր փուլում հնարավոր սպառնալիքները:

Գլոբալացած աշխարհում մարդկանց, ազգերի ու պետությունների համակեցության նոր չափորոշիչների ձևավորման հրամայականը գոյաբանական մարտահրավեր է, որովհետև մարդկային քաղաքակրթությունն այլևս

ՎԷՆ ՀԱՄԱՆԿԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՒՄ, ԺԲ (ԺԸ) ԳՐԱԻՐ, ԹԻՎ 2 (70), ԱՊՐԻԼ-ԻՄԵՐԻՍ, 2020

ի վիճակի չէ առաջադիմել առկա տնտեսաքաղաքական մոդելի շրջագծում: Նրա փոխակերպման գործընթացի վրա ազդող ու հակազդող ուժերի պայքարը չի հանգեցնելու մեկուսի քաղաքակրթական լուծումների հակադրությանը, որովհետև Երկիր մոլորակի փոքրացող տարածքը ոչ միայն հակադրությունների միասնություն, այլև մեղմացում է պահանջում: Համաշխարհային քաղաքակրթությունը վերականգնելու է իր նախնական միջուկը, որի շուրջն է դասավորվելու Ամերիկա և Եվրասիա մայրցամաքների ողջ հյուսիսը: Մյուս մայրցամաքներում՝ Հարավային և Հարավարևելյան Ասիա, Աֆրիկա և այլն, հնարավոր են որոշակի դերաբաշխումներ ու փոխատեղումներ:

Ներկա դաժան ցնցարուժությունն ուղղակի ընտրության տեղ չի թողել փոքր ազգերի համար, որոնց առջև կանգնած խնդիրը ոչ թե գործընթացի օբյեկտիվ բնույթն անտեսելը կամ էլ դրան անձնատուր լինելն է, այլ **պրոգրեսի ազգային բանաձևեր** գտնելը: Համաշխարհային ցնցարուժությունը սկզբում բերելու է աշխարհաքաղաքացիական հովերի ուժեղացմանը, ինչպես որ դա եղել է բոլոր հեղափոխությունների ժամանակ: Բայց գորբալիզացիան չի ոչնչացնելու ազգերին, այլ պարզապես նոր խնդիրներ է դնելու նրանց առջև, այսինքն՝ հիմնավորապես փոխելու է մրցակցային միջավայրը նրա մարդկայնացման ու ռացիոնալացման միջոցով: Նման միջավայրում զարգանալու համար ազգերից յուրաքանչյուրը պետք է հստակեցնի իր գոյատևման հորիզոնական կամ տարածքային և զարգացման ուղղահայաց կամ արժեքային չափորոշիչները: Ընդ որում, երկրորդ մրցադաշտի դերակատարության մեծացմանը զուգընթաց, գորբալ մրցահարթակներում արձանագրված հաղթանակներն ուղղակի անդրադարձ են ունենալու առանձին ազգերի կենսատարածքի ֆիզիկա-աշխարհագրական չափորոշիչների վրա:

Ուստի որպես համաշխարհային ազգ՝ մենք եզակի հնարավորություն ենք ստանում օգտվելու նոր մրցադաշտից՝ մեր հին խնդիրների լուծման համար: Մեր առաջնային խնդիրն այսօր ազգայինի ու համամարդկայինի նոր համադրության կոնկրետ չափորոշիչների հստակեցումն է, այսինքն՝ **«մենք»**-ի կամ մեր ինքնության դարաշրջանային նոր կադապարի բյուրեղացումը: Գլոբալիզացիայի պայմաններում դրա բանալիները կարող է տալ միայն ազգային գաղափարախոսության հիմքի վրա ձևավորված **ազգային-պետական գաղափարախոսությունը:**

Գեռևս 2000-ականներին կանխատեսելով այն աշխարհացունց փոփոխությունները, որոնք սպասվում են ողջ աշխարհում ու քաղաքակրթության բնօրրան մեր տարածաշրջանում՝ Երկիր դրախտավայրում, փորձել ենք այդ գաղափարախոսության ուրվագծերը ներկայացնել մեր հանրությանը: Ներկայումս, երբ համաշխարհային ճգնաժամն արագացնում է քաղաքակրթական գործընթացների ծավալումը, հայկական **«մենք»**-ի դարաշրջանային կերպավորման հստակեցման խնդիրը մեզ մատուցվող օտարամուտ կադապարների հաղթահարման միակ ուղին է: Ուստի ժամանակն է հստակորեն առաջնորդվելու գլոբա-

լացող աշխարհում **կոսմոպոլիտների** ու **մարզինալների** գույգ դաշտերից հավասար հեռավորություն պահպանելու համար անհրաժեշտ **դինամիկ հավասարակշռության բանաձևով**, որի արտաքին ու ներքին կշռույթների գրաֆիկական պատկերները ներկայացրել ենք դեռևս 2003 թվականին⁷: Վերջինս պահանջում է ամեն պահ հստակեցել համաշխարհային քաղաքակրթության **արևի** շուրջ հայկական ազգ-պետության **մոլորակի** պտույտների **ուղեծիրը**:

Համավարակի պայմաններում արտաքին մարտահրավերների ներքաղաքական ընկալումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այսօր մեր երկիրն իր ներքում ավելի խոցելի է, քան թշնամիներով շրջապատված արտաքին սահմանագլխին: Ազգային-պետական գաղափարախոսության՝ «**Միասնություն** (արտաքին ճակատ) - **Համաձայնություն** (ներքին ճակատ)» բանաձևով առաջնորդվելու փոխարեն Հայաստանն ուղղակի բզկտվում է դրսից բեմականացվող բազմասերիանոց թատրոններում: Եվ քանի դեռ սեփական հիմքի վրա նորացման հայկական բանաձևը չի որդեգրվել, և դրա կրողը հանդիսացող ազգային ընտրախավը չի ձևավորվել, վերջիններս շարունակելու են կրկեսի վերածել մեր ներքաղաքական կյանքը:

Պատմության մեջ տեղի ունեցած յուրաքանչյուր աշխարհացունց իրադարձության ժամանակ հայ ժողովուրդը վերապրել է շնորհիվ իր ամբողջականության՝ «**մենք**»-ի հստակ գիտակցման: Միջնադարում հոգևոր հայրենիքի առաջնորդը՝ Հայաստանյայց եկեղեցին է մեզ առաջնորդել դեպի Ավարայր, իսկ Նոր ժամանակներում ազգ-պետություն ունենալու հրամայականի կրողը դարձած ազգային կուսակցությունների ընտրախավը մեզ տարել է Սարդարապատ: Մինչդեռ վերջին երկու տարիները ցույց են տվել, որ 2018 թ. գարնանը տեղի ունեցած «հեղափոխությունը» չի գտել «**մենք**»-ի ընկալման նոր բանաձևը, ուստիև չի ձևավորել նրա կրողը հանդիսացող նոր ընտրախավ: Իսնդրի գիտակցումը բացակայում է անգամ առանձին իշխանական անհատների մակարդակով, որոնց մտահորիզոնը դուրս չի եկել նախկինների արատները «քաղաքական բիզնեսի» վերածողի նեգատիվիստական կաղապարներից:

Մի կողմից՝ գլոբալ հեղափոխությունը և մյուս կողմից՝ դրանից արդեն լրջորեն անհանգստացած թուրքական գործոնի ակտիվացումը առաջ են բերում **ապագայապաշտական հայացքով** առաջնորդվող ազգային ընտրախավի սուր կարիքը, որը կհաղթահարի դեռևս թեզ-հակաթեզի մակարդակին գտնվող ներկա դիսկուրսի պարզունակությունը: **Մեզանում այսօր սուր կերպով զգացվում է քաղաքակրթության բնօրրան Երկիր դրախտավայրի միասնական քաղաքակրթական տարածքի վերածվելու գործընթացը** Հայաստանի ընդարձակման բանաձևի փոխակերպողների սուր պահանջը: Որովհետև քաղաքակր-

⁷ Տե՛ս **Խուդինյան Գ.**, նշվ. աշխ., էջ 64 և 83:

թույթյան թշնամի թուրքից բխող ներկա սպառնալիքների հաղթահարման գործը հնարավոր է հաջողությամբ իրականացնել համամարդկային նոր տեսլականի ու ազգային ավանդական նպատակների ներդաշնակեցման միջոցով:

Նույն խնդիրը՝ որպես աշխարհաքաղաքական տարբեր ազդակներից բխող արժեքների ներդաշնակեցման հրամայական, պահանջում է նաև ներքաղաքական լուծումներ: Այդ պատճառով, վերադառնալով **երկու մասից** բաղկացած ներկա վերլուծականի սկզբին, պարտավոր ենք նորից հիշեցնել, որ մարդկությունը թևակոխել է իր պատմության բեկումնային հանգրվաններից մեկը, որը հատկանշվում է **մտքի խոր ճգնաժամով**:

Բայց եթե ապահով ազգերի լավագույն մտածողները երկար-բարակ քննարկումներ կազմակերպելու հնարավորություն ունեն, մեր ազգային մտքի հատուկեմո ներկայացուցիչները⁸ այլևս սպասելու ոչ ժամանակ ունեն և ոչ էլ իրավունք: Ուստի նորից **անավարտ թողնելով** խորացող ճգնաժամի հաղթահարման ուղիների քննարկումները՝ նրանց հրավիրում ենք մեր հանդեսի էջերում աւելու այն իմաստուն խոսքը, որին այնքան կարոտ է մեր շփոթված ժողովուրդը:

Եզրակացություններ

1. Մեր կարծիքով՝ Covid-19-ն իրականում ոչ թե ներկա գլոբալ ճգնաժամի պատճառն է, այլ հետևանքը: Գլոբալ ճգնաժամը՝ զարգացումների համաժամանակյա (սինքրոնիկ) հարթության վրա լուսարձակում է հասարակարգային փակուղու, իսկ տարածամանակյա (դիսքրոնիկ) հարթության վրա՝ քաղաքակրթական ճգնաժամի զույգ իրողությունները: Հասարակարգային փակուղին հետարդյունաբերական դարաշրջանի կապիտալիզմի խոր ճգնաժամն է, որն ակնհայտորեն ճկվել է վերջին տասնամյակներում կուտակված, իսկ համավարակի պայմաններում՝ կրիտիկականի սահմանագծին հասած տնտեսաքաղաքական խնդիրների բեռի տակ: Իսկ ահա քաղաքակրթական ճգնաժամի հիմքում որպես ուրույն քաղաքակրթություններ կայանալու գերտերությունների փորձերի ակնհայտ անհամապատասխանությունն է համամոլորակային մարտահրավերներին:

2. Գլոբալ ճգնաժամի լուսարձակման սկիզբը դրած համավարակը մեզ սպասող խորքային հեղաբեկումների առաջին հանգրվանն է, բայց ոչ բարձրակետը: Ակնհայտ է, որ հաջորդ հանգրվանը լինելու է 1929 թվականի աղետից ավելի դաժան ֆինանսատնտեսական ճգնաժամը, որին զուգահեռ բռնկվելու են նաև պատերազմների բոցերը:

⁸ Նրանցից մեկի՝ **Ատոմ Ը. Մարգարյանի** «Թագավարակ: Նորագույն տեխնոլոգիաները և նոր աշխարհակարգի մարտահրավերները» ուսումնասիրությունը լույս կտեսնի մեր հանդեսի հաջորդ համարներում:

3. Երկիր մոլորակի սահմանափակ տարածքում համաշխարհային քաղաքակրթության հետ ու առաջ շարժումների ներկա հանգրվանում ձևավորված ահռելի անհամամասնությունները արտաքուստ բաժանվում են մի քանի խոշոր խմբերի՝ ֆինանսատնտեսական, բնապահպանական, ժողովրդագրական և այլն, բայց բոլորն էլ նյութականի ու հոգևորի, մարդ բանականի ու բնության զավակի՝ միմյանց ու արտաքին աշխարհի հետ հարաբերություններում ստեղծված խոր հակասությունների արդյունք են: Նման սպառնալիքների անկառավարելի կուտակումը գործալացող աշխարհին վաղ թե ուշ պետք է բերեր գորբալ հեղափոխության զաղափարին, ինչը հնարավոր է իրականացնել միայն նոր շրջադարձի՝ դեպի հետ, դեպի մարդկության բնօրրան, դեպի Երկիր դրախտավայր վերադարձի միջոցով:

4. Համավարակի տարածման հետևանքով ձևավորվող մրցակցային նոր միջավայրում որակը վերջնականապես և անդառնալիորեն հաղթում է քանակին՝ առաջ բերելով քաղաքական տարբեր ձգտումներ ունեցող պետությունների եռամակարդակ շերտավորումը, որի առաջին սանդղակում անգլոսաքսոնական երկրներն ու Չինաստանն են և դեռևս իր ատլանտյան նախապատվությունը պահպանող մայրցամաքային Եվրոպան, երկրորդում՝ ռեսուրսային տնտեսություններ ունեցող պետությունները, իսկ ահա երրորդում են հայտնվել պարզ գործիքներից գործոնի վերածվելու կամ գոնե «գլուխ պահելու» փորձեր անող մեզ նման փոքր երկրները:

5. Համաշխարհային պատմության մեջ արձանագրված քաղաքակրթությունների անկումներն ու տրոհումները, դրանց ուղեկցած ճգնաժամերն ու համաճարակները թուրք ցեղի հաջողության վճռական պայմանն են եղել: Ուստի երբ չափից ավելի նյութականացած մարդկությունը Մերձավոր-Միջին Արևելքում գտնվող իր հոգևոր նախահիմքին՝ Երկիր դրախտավայրին վերադառնալու ցանկություն է դրսևորում, Թուրքիայում գիտակցում են, որ իրենք օտար են տվյալ տարածաշրջանում, ուստի աստիճանաբար դուրս են մղվելու համաշխարհային քաղաքակրթության բնօրրանից: Դա է պատճառը, որ համաշխարհային ճգնաժամի հաղթահարման համար անհրաժեշտ Երկիր դրախտավայրը հայտնվել է օրեցօր ավելի ու ավելի ագրեսիվ դարձող Թուրքիայից բխող իրական սպառնալիքների առջև: Եվ քանի դեռ գորբալ ճգնաժամը չի հասել իր բարձրակետին, Թուրքիան համառորեն դաշնակիցներ է փնտրում իր բախտակից ռեգիոնալիստական ուժերի շրջանում՝ Մերձավոր-Միջին Արևելքի վերաբաժանումն արագացնելու, այսինքն՝ մի նոր Լոզան նախապատրաստելու համար:

6. Թեև իր հումքային պաշարներով Ռուսաստանն աշխարհի ամենահարուստ երկիրն է, բայց խորհրդային ամբողջատիրության չհաղթահարված բեռը նրան հասցրել է քաղաքակրթական հոգեվարքի, որն ամեն պահի կարող է 1917 թվականը հիշեցնող որևէ սցենարի կրկնությունը դառնալ: Ռուսաստանում անկասելիորեն խորացող ճգնաժամը տանում է նրա քաղաքակրթական դեմքի

հատակեցմանը: Համավարակը, արագացնելով այդ գործընթացը, միաժամանակ նպաստելու է նրա խաղաղ հանգուցալուծմանը: Բայց մինչ այդ հասկանալով, թե ինչ կարևոր դեր է վերապահված անկախ Հայաստանին համավարակով սկիզբ առնող գլոբալ ցնցարուժության հաջորդ հանգրվաններում, Մոսկվայում ամեն ինչ անում են մեզ նորից **ամբողջովին տիրելու** և օգտագործելու նպատակով: Երբ Արևմուտքը չի ընդունում Երկրորդ աշխարհամարտի արդյունքների հիմքի վրա երկխոսելու Ռուսաստանի ղեկավարության առաջարկը և որպես համաշխարհային քաղաքականության առանցքային միտումի կրող՝ վերադառնում է իր քաղաքակրթական նախահիմքին, որն անթեղված է ոչ թե Երկրորդ, այլ Առաջին աշխարհամարտի մոխիրների տակ, Հայաստանի բերանը փակելու համար Մոսկվայում ներկայումս առկա քաղաքական վարչակարգին 2008 թ. իշխանության բերվածի և 2009 թ. հայ-թուրքական արձանագրությունները ստորագրածի նման մեկն է հարկավոր: Բայց քանի որ Ռուսաստանի ղեկավարության էգոիստական ձգտումները ամենևին էլ չեն նույնանում Ռուսաստան պետության ու ռուս ազգի նպատակների հետ, մենք պետք է լռենք ու դիմանանք՝ սպասելով առաջիկա աշնանից այդ երկրում անխուսափելի դարձող քաղաքական փոփոխություններին:

7. 2018 թ. գարնանը Հայաստանում տեղի ունեցած հեղափոխական ցնցումներից հետո մեր երկրի քաղաքական դաշտը ազգային քաղաքականության սահմանափակ սուբյեկտից վերածվել է այլոց քաղաքականության գրեթե ամբողջական օբյեկտի, որը բզկտվում է իր ներսում առկա օտարամուտ տարրերի անհաշտ դիմակայությունից: Նման դիմակայության առկայության պայմաններում միանգամայն բնական է, որ հայ մարդկանց կյանքեր խլող համավարակը նույնպես վերածվում է ներքաղաքական պայքարի գործիքի: Արտաքին ուժերի ներհայաստանյան դիմակայության սրման հետևանքով մեր երկիրը ռեկորդներ է գրանցում համավարակի տարածման ասպարեզում, որովհետև հայ մարդկանց կյանքն ու առողջությունը հայանուն օտարներին չեն հետաքրքրում:

8. Հայաստանի քաղաքական դաշտի հայկական սեգմենտի թուլացումը հասել է այն վտանգավոր սահմանագծին, երբ «մենք»-ի, մեր ինքնության արդիական ընկալումը գրեթե իսպառ բացակայում է: Յուրաքանչյուր աշխարհացունց իրադարձության ժամանակ հայ ժողովուրդը վերապրել է շնորհիվ իր ամբողջականության «մենք»-ի հատակ գիտակցման: Միջնադարում Հայաստանյայց եկեղեցին է մեզ առաջնորդել դեպի Ավարայր, Նոր ժամանակներում «մի կտոր հող», այսինքն՝ ազգ-պետություն ունենալու հրամայականի կրող ազգային կուսակցությունների ընտրախավը մեզ տարավ Սարդարապատ: Ուստի այսօր մեզանում սուր կերպով զգացվում է քաղաքակրթության բնօրրանը Երկիր դրախտավայրի՝ միասնական քաղաքակրթական տարածքի վերածվելու գործընթացը **Հայաստանի ընդարձակման բանաձևի** փոխարկողների սուր պահանջը: Որովհետև քաղաքակրթության թշնամի թուրքից բխող սպառնալիքների հաղթահարման գործը

հնարավոր է հաջողությամբ իրականացնել համամարդկային նոր տեսլականի ու ազգային նպատակների ներդաշնակեցման միջոցով:

9. Մի կողմից՝ գլոբալ հեղափոխությունը ու մյուս կողմից՝ տարածաշրջանում նրանից անհանգստացած թուրքական գործոնի ակտիվացումը առաջ են բերում **ապագայապաշտական հայացքով** առաջնորդվող ազգային նոր ընտրախաղի սուր կարիքը, որը կհաղթահարի դեռևս թեզ-հակաթեզի մակարդակին գտնվող ներկա ներհայաստանյան դիսկուրսի ողջ պարզունակությունը:

Գևորգ Ս. Խոսրոհյան - գիտական հետաքրքրությունների շրջանակում են հայոց նոր պատմության առանցքային հիմնահարցերը: Հրատարակել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ հայ ազգային-ազատագրական շարժման, Հայկական հարցի և հայ ազգային կուսակցությունների պատմության վերաբերյալ: Չբաղվում է նաև պատմության տեսության ու մեթոդաբանության հիմնահարցերի հետազոտությամբ:

Summary

WORLD CRISIS AND WE

Gevorg S. Khoudinyan
Doctor of Sciences in History

Key words - crisis, epidemic, globalization, world civilization, Earth paradise, Turkish plague, Russia, Armenia, trap, ideology, futuristic view.

In our opinion, Covid-19 is actually not a cause, but a consequence of the current global crisis. The crisis is deeper and multilayered, and the pandemic only reveals the deep layers of the real problems that human civilization is facing with. On the synchronous plane, they shine through the impasse of the existing social system, and on the diachronic plane – the fact of a civilization crisis.

The dead end of the existing social system is a deep crisis of capitalism in the post-industrial era, which has obviously bent under the weight of economic and political problems that have accumulated over the past decades, and which have reached a critical point in a pandemic.

On the basis of the civilizational crisis beginning in parallel with this is the apparent discrepancy between the planetary challenges of individual attempts by the superpowers to become distinct civilizations, which leads to the formation of global regions, that is, the universalization of globalization.

The pandemic that marked the beginning of the current crisis is the first intermediate point of the deep changes awaiting us, but not its culmination. Obviously, the next point will be the financial and economic crisis, more severe than in 1929, in parallel with which wars will also rage.

In the new competitive environment, which is emerging as a result of the spread of the pandemic, quality finally and irrevocably wins the number, causing a three-level stratification of states with different political aspirations; on its first scale are the Anglo-Saxon countries and China, accusing each other of the spread of the deadly virus, and continental Europe, which still retains its traditional Atlantic preference. On the second scale are the states with a resource economy, the welfare of which is built on the almost inexhaustible reserves of energy and industrial and agricultural raw materials. But on the third scale are small countries, like ours, trying to turn from simple tools into factors of politics, or at least “to eke out an existence”.

The indisputable unity of world civilization at the present stage of its forward and backward movements on the limited territory of planet Earth has led to the formation of enormous imbalances, which externally are divided into several large groups: financial, economic, environmental, demographic, etc., but all of them are the result of deep contradictions that arose as a result of the loss of balance of material and spiritual worlds and harmony between a rational person and a child of nature. An uncontrolled accumulation of such threats would sooner or later lead the globalizing world to the idea of a global revolution, which can only be realized as a new turn back, to the cradle of humanity, with the help of a return to the Promised Land.

Recognized in the world history of the fall and splitting of civilizations, their accompanying crises and epidemics and other misfortunes of mankind, were decisive conditions for the success of the Turkish tribe, therefore when an overly materialized humanity shows a desire to return to its spiritual fundamental principle – the Promised Land, in Turkey they realize that they will gradually be squeezed out of the cradle of world civilization. For this reason, the Promised Land necessary to overcome the global crisis, which, through its history, culture and way of life, should become a valuable prototype of humanity striving for harmony, faced real threats emanating from becoming more and more aggressive Turkey every day.

Although Russia is the richest country in the world with raw materials, the unbroken burden of Soviet totalitarianism brought it to civilizational agony, which at any moment can turn into a repeat of 1917. An inevitably deepening crisis in Russia leads to an understanding of its civilizational image, but a pandemic, accelerating this process, will at the same time serve to resolve it peacefully. All this shows that soon we will be left alone in the face of serious external dangers, so it is time to look at the events in our country through other points.

After the revolutionary upheavals in Armenia in the spring of 2018, its political field from a limited subject gradually turned into an almost integral object of an irreconcilable confrontation of external forces. Given the existence of such a confrontation, it is quite natural

that the pandemic that kills the lives of Armenians is also turning into an instrument of internal political struggle. As a result, the remnants of the former empire disseminate among the ignorant people the hypothesis of the falsity of Covid-19, sentencing them to certain death. But the populist authorities see the geometric progression of the pandemic as an opportunity to distance the moment when it will be necessary to answer for failures. As a result of the aggravation of the confrontation of external forces within Armenia, our country registers records in the field of the spread of the pandemic, because not one of the external forces is interested in the life and health of the inhabitants of Armenia.

The weakening of the Armenian segment of the political field of Armenia reached the dangerous point when the modern perception of “we” and our identity, has almost completely disappeared. During each world shocking historical turning point, the Armenian people survived due to their integrity – a clear awareness of “we”. In the Middle Ages, it was a spiritual home – the Armenian Apostolic Church, leading us to Avarayr. In modern times, it is imperative to have a “piece of land”, that is, a nation-state leading us to Sardarapat. And today, we urgently feel the need for those who transform the process of turning the cradle of world civilization into a civilized territory into a formula for the expansion of Armenia. Since the matter of overcoming the threats emanating from Turkey - the sworn enemy of civilization, first of all, requires harmonization of the universal ideal and national goals.

Резюме

ВСЕМИРНЫЙ КРИЗИС И МЫ

Геворк С. Худинян
Доктор ист. наук

Ключевые слова - кризис, пандемия, глобализация, мировая цивилизация, Райская земля, турецкая чума, Россия, Армения, капкан, идеология, футурологический взгляд.

По нашему мнению, Covid-19 на самом деле является не причиной, а следствием нынешнего глобального кризиса. Кризис более глубокий и многослойный, а пандемия лишь раскрывает глубинные пласты действительных проблем, стоящих перед человеческой цивилизацией. На синхронической плоскости они просвечивают тупиковость существующего общественного строя, а на диахронической плоскости - факт цивилизационного кризиса.

Тупиковость существующего общественного строя - это глубокий кризис капитализма постиндустриальной эпохи, который очевидным образом согнулся под грузом экономико-политических проблем, скопившихся за последние десятилетия, а в условиях пандемии дошедших до критической черты.

В основе начинающегося параллельно с этим цивилизационного кризиса - очевидное несоответствие общепланетарным вызовам отдельных попыток сверхдержав стать самобытными цивилизациями, что приводит к формированию глобальных регионов, то есть к универсализации глобализации.

Пандемия, положившая начало нынешнему кризису, является первым промежуточным пунктом ожидающих нас глубинных перемен, но не его кульминацией. Очевидно, что следующим пунктом будет финансово-экономический кризис, более жестокий, чем в 1929 г., параллельно которому будут также бушевать войны.

В новой конкурентной среде, формирующейся в результате распространения пандемии, качество окончательно и бесповоротно побеждает количество, вызывая трехуровневую стратификацию государств с разными политическими стремлениями; на ее первой шкале находятся англосаксонские страны и Китай, обвиняющие друг друга в распространении смертоносного вируса, и еще сохраняющая свое традиционное атлантическое предпочтение континентальная Европа. На второй шкале государства с ресурсной экономикой, благосостояние которых построено на почти неиссякаемых запасах энергоносителей и промышленного и сельскохозяйственного сырья. А вот на третьей маленькие страны, как наша, пытающиеся из простых инструментов превратиться в факторы политики, или хотя бы «отвилить».

Неоспоримое единство всемирной цивилизации на нынешнем этапе ее движений вперед - назад на ограниченной территории планеты Земля, привела к формированию громадных диспропорций, которые внешне делятся на несколько крупных групп: финансово-экономические, экологические, демографические и т. д., но все они являются результатом глубоких противоречий, возникших в результате потери равновесия материальных и духовных миров и гармонии между человеком разумным и дитяти природы. Неуправляемое скопление подобных угроз рано или поздно должно было привести глобализующийся мир к идее глобальной революции, которую возможно осуществить только как новый поворот назад, к колыбели человечества, с помощью возвращения к Земле Обетованной.

Констатированные во всемирной истории падения и расщепления цивилизаций, сопутствующие их кризисы и эпидемии и другие несчастья человечества, были решающими условиями для успехов турецкого племени, поэтому когда чрезмерно материализованное человечество проявляет желание вернуться к своей духовной первооснове - Земле Обетованной, в Турции осознают, что, они постепенно будут выдавлены из колыбели всемирной цивилизации. По этой причине необходимая для преодоления всемирного кризиса Земля Обетованная, которая своей историей, культурой и бытом должна стать ценностным прототипом стремящегося к гармонии человечеству, оказалась перед реальными угрозами, исходящими от становящейся с каждым днем все более и более агрессивной Турции.

Хотя Россия - самая богатая сырьевыми запасами страна в мире, но непреодоленное бремя советского тоталитаризма довело ее до цивилизационной агонии,

которая в любой момент может превратиться в повторение 1917 года. Неотвратимо углубляющийся кризис в России ведет к уяснению ее цивилизационного облика, но пандемия, ускоряя этот процесс, одновременно будет служить его мирному разрешению. Все это показывает, что скоро мы останемся одни перед лицом серьезнейших внешних опасностей, поэтому настало время смотреть на происходящие в нашей стране события через иные очки.

После революционных потрясений, происшедших в Армении весной 2018 г., ее политическое поле из ограниченного субъекта национальной политики постепенно превратилась в почти целостный объект непримиримой конфронтации внешних сил. В условиях наличия подобной конфронтации совершенно естественно, что уносящая жизни армян пандемия тоже превращается в инструмент внутривнутриполитической борьбы. В результате остатки бывшей империи распространяют среди несведущих людей гипотезу о ложности Covid-19, приговаривая их к верной смерти. А вот популистские власти рассматривают геометрическую прогрессию пандемии как возможность отдаления момента, когда надо будет отвечать за провалы. В результате обострения конфронтации внешних сил внутри Армении наша страна регистрирует рекорды в области распространения пандемии, потому что жизнь и здоровье жителей Армении ни одну из внешних сил не интересует.

Ослабление армянского сегмента политического поля Армении дошло до той опасной черты, когда современное восприятие «мы», нашей идентичности почти полностью исчезло. Во время каждого сотрясающего мир исторического перелома армянский народ выживал благодаря своей целостности - ясного осознания «мы». В средневековье это был духовный дом -Армянская апостольская церковь, ведущая нас к Аварайру, в Новое время императив иметь «ключок земли», то есть нацию-государство, ведущий нас на Сардарapat. А сегодня у нас остро ощущается потребность в тех, кто трансформирует процесс превращения колыбели всемирной цивилизации в общецивилизационную территорию в формулу расширения Армении. Потому что дело преодоления угроз, исходящих от заклятого врага цивилизации Турции, прежде всего требует гармонизации общечеловеческого идеала и национальных целей.

REFERENCES

1. **Jaspers K.**, Smysl I naznachenije istorii: Per. s nem.- M.: Politizdat, 1991 (**In Russian**).
2. **Khoudinyan G.**, Azgayin yev azgayin-petakan gaghap'arakhosut'yun, Yer., 2003 (**In Armenian**).
3. **Lagutina M. L.**, Mir regionov v mirovoj politicheskoy sisteme XXI veka. SPb.: Izd-vo S.-Peterb. Politex. un-ta, 2016 (**In Russian**).